

անհաւանական է որ Հայերն այս կողմերում վանք ունեցած լինէին. (Es wird wohl ein nestorianisches Kloster gewesen sein, da es unwahrscheinlich ist, dass Armenier in dieser Gegend ein Kloster gehabt haben sollten.) բայց այն ժամանակ դեռ յայտնի չէր տապանաքարի հայերէն արձ. գոյութիւնը. իսկ այժմ կատարունեան քարտեզի ցուցումը կարող է եւ ճիշդ լինել¹: Բաց ի սորանից Վարդանին վերագրած աշխարհադրութիւնը Միջին Ասիայի քրիստոնեաների մասին խօսելիս, հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը. (S. Martin, Mém. histor. et géogr. sur l'Arm. II. p. 436՝ բնագիրը, եւ էջ 437. Փրանսերէն թրգմ. եւ Պետերբուրգի կայսր. համալսարանի մատենադ. ձեռագ.) «Իսկ ի կողմանէ Պարսից սկսեալ յարեւելից նախ Չին ու Մաչին եւ խաթա քաղաքն եւ աշխարհն, որ է գին բոլոր աշխարհին եւ են ուղղափառ քրիստոնեայք եւ ունին թագաւո-

րութիւն եւ քահանայութիւն. ունին արդար դատաստան եւ ճշմարտութիւն, ոչ որքն լայ եւ ոչ այրին ոգւոց հանէ, եւ ունին գիրք միայն զՄատթէոս-գլուխ աւետարանն եւ պարարտ է աշխարհն, բարեխառն եւ բարելի, մի անգամ սերմանեն եւ Գ. տարի հաց լինի, քանզի մտ է դրախտին, անտի գայ ամբարն եւ անուշահոտ ծաղկունքն՝ դեղ զանազան ցաւոց:»

Հայոց Ս. Մատթէոս եկեղեցու անունը, որ մտցրած է եւ կատարունեան քարտեզը, թերեւս, բացատրուի նորանով, որ Մատթէոս աւետարանիչը մեծ յարգ ունէր հեռաւոր Արեւելքի այդ քրիստոնեաների աչքում: Մեր քաղաւածքում ոչինչ ակնարկութիւն չկայ Հայոց մասին, բայց երեւում է, որ հայ պատմագիրը յիշած քրիստոնեաներին իրեն հաւատակից է համարում, որովհետեւ նոցա անուանում է «ուղղափառ»:

Ն. Ա.



Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Տ Ա Կ Ո Տ Ո Ր Ք Ե Ի Ս Ե Բ Ե Ը Յ Ե Կ Ղ. Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ը Ն

Ղերջին օրերս բարեկամներէս մին՝ խաւրած էր ինձ երեք մագաղաթեայ թուղթ, էջ 6՝ եւ կամ 12 սիւնակ: Մեծութիւնն է 35×25 հարիւրորդամէթր. հին երկաթագրով գրուած, երկսիւնակ, իւրաքանչիւր սիւնակն ունի 27 տող: Ղերնագիրք փոքր երկաթագրով են:² Միտ դնել կու տանք ուղղագրական մասերուն, որք գրչութեան հնութեան ապացոյց կրնան ըլլալ. զ. օ. իւ. յոյսնէին, էին, կեսարեւ. եւն:

Բարեկամս կը գրէ ինձ թէ՛ «զասոնք՝ հին, մաշած, քայքայած, մեծաւ մասամբ թղթերն կորսուած, եւ վերջապէս բոլորովն անգործածելի վիճակի հասած Յոյսնէի մը երկու կողքերուն մէջէն հանած է:» Շատ շնորհակա-

լութեամբ ընդունեցայ բարեկամիս՝ ինձ համար՝ այս անգին նուէրն:

Թուեցաւ ինձ՝ թէ ասոնք հատակոտորք են Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան,^{*} բայց դժբախտաբար նոյն պատմութիւնն աչքի յառաջ չունենալով չկրցայ բաղդատել: Իբր հետաքրքրական ինչ, ընդօրինակելով Չեղ կը խաւրեմ, պատուական Հանդէս Աճառեայի մէջ ի հրատարակութիւն: Ընդօրինակութիւնն ըրած եմ հաւատարմաբար: Տ. Ա. Պ.

Կեսարիա, 25 Հոկտեմբեր, 1894:

* Խմբագրութեանս խաւրած յաջորդ հատակոտորքն արժանի են բանասիրաց ուշադրութեան. գործնք կը հրատարակենք հոս ճշգրտութեամբ: Մտադրութեան արժանի են Վենետիկ տպագրութեանն ունեցած տարբերութիւնք. (հրտ. Հ. Արք. Վ. Ծարեան. Վննետ. 1877): Մանրամասն համեմատութիւն մ'ընել ընթերցուածոց եւ ուղղագրական տարբերութեանց «Համդիսիս» մէջ աւելորդ համարեցանք, միայն քանի մը կէտ նշանակեցինք: Հատակոտորքս Եւսեբեայ Եկեղեցական Պատմութեան Ի գրոց Ա, Ե—Ը գլուխները կը բովանդակեն: ԽՄԲ.

¹ Այստեղ կարելի էր յիշել, իրեւ ծանօթութիւն որ Թիւարիկ ճանապարհորդը վկայում է այդ եկեղեցու գոյութեան մասին, ինչպէս յիշուած է Հ. Արեւիկայի սուսնում:

² Ոչ թէ ցանկն՝ այլ հատուածոց մէջ եղած վերնագիրք: